

*ՀՀ Տավուշի մարզի Կողբի համայնքապետարանը հայտարարում է մրցույթ աշխատակազմի ֆինանսական բաժնի երկրորդ կարգի մասնագետի (ծածկագիր՝ 3.3-1) համայնքային ծառայության թափուր պաշտոնը զբաղեցնելու համար:*

Երկրորդ կարգի մասնագետը անմիջականորեն ենթակա և հաշվետու է աշխատակազմի ֆինանսական բաժնի պետին, կատարում է նրա հանձնարարությունները, չունի աշխատանքների կազմակերպման, համակարգման, դեկավարման կամ վերահսկման լիազորությունները: Երկրորդ կարգի մասնագետը՝

- աջակցում է հաշվապահական հաշվառման, ֆինանսական և վիճակագրական հաշվետվությունների ժամանակին կազմելու և ներկայացնելու աշխատանքներին,

- բաժնի պետի հանձնարարությամբ կազմում է հաշվապահական հաշվառման սկզբնական փաստաթղթերը,

- հավաքում ու համակարգում է առկա տեղեկատվությունը,  
- պատասխանատվություն է կրում հաշվապահական հաշվառման փաստաթղթերի, ինչպես նաև համակարգչային կրիչների վրա գտնվող հաշվապահական տեղեկատվությունների պահպանման համար, ունի օրենքով և այլ իրավական ակտերով նախատեսված այլ իրավունքներ և կրում է այդ ակտերով նախատեսված այդ պարտականություններ:

Ֆինանսականբաժնի երկրորդ կարգի մասնագետի պաշտոնն զբաղեցնելու համար պահանջվում է ունենալ՝

ա/առնվազն միջնակարգ կրթություն,

բ/ <<Համակարգչային ծառայության մասին>>,<<Տեղական ինքնակառավարման մասին>>, <<Հաշվապահական հաշվառման մասին>>, <<Գնումների մասին>>, <<ՀՀ բյուջետային համակարգի մասին>> ՀՀ օրենքների անհրաժեշտ իմացություն, տրամաբանելու և կողմնորոշվելու կարողություն,

գ/ Համակարգչով և ժամանակակից տեխնիկական միջոցներով աշխատելու ունակություն:

*Երկրորդ կարգի մասնագետի պաշտոնն զբաղեցնելու համար աշխատանքային փորձի առկայությունը պարտադիր չէ:*

Մրցույթին մասնակցելու համար դիմողները պետք է ներկայացնեն հետևյալ փաստաթղթերը՝

ա/ մրցութային հանձնաժողովի անունով գրավոր դիմում,

բ/ տվյալ պաշտոնն զբաղեցնելու համար մասնագիտական գիտելիքների և աշխատանքային փորձի տիրապետմանը ներկայացվող պահանջների բավարարումը հավաստող փաստաթղթերի /դիպլոմ, վկայական, աշխատանքային գրքույկ/ բնօրինակներ և պատճեններ,

գ/ հայտարարություն, որ ինքը չի տառապում Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի մարտի 3-ի թիվ 310-Ն որոշմամբ հաստատված ցանկում ընդգրկված հիվանդություններից որևէ մեկով,

դ/ հայտարարություն, որ ինքը դատական կարգով չի ճանաչվել անգործունակ կամ սահմանափակ գործունակ,

ե/ արական սեռի անձիք ներկայացնում են նաև զինվորական գրքույկի կամ դրան փոխարինող ժամանակավոր և զորակոչային տեղամասային կցագրման վկայականի պատճեն կամ համապատասխան տեղեկանք,

զ/ մեկ լուսանկար՝ 3X4 չափի,

է/ անձնագրի պատճեն:

Փաստաթղթերը ներկայացվում են անձամբ: Փաստաթղթերն ընդունվում են մինչև **12.07.2017թ.** Կողբի համայնքապետարանում և Տավուշի մարզպետարանի աշխատակազմի ՏԻ և ՀԳՄ հարցերով վարչությունում, աշխատանքային օրերին՝ ժամը 11-ից մինչև 16-ը:

Մրցույթը կկայանա Կողբի համայնքապետարանում 2017թ. հուլիսի 28-ին ժամը 11-ին: Փաստաթղթերի ներկայացման վերջնաժամկետը 2017 թ. հուլիսի 12-ն է : Հասցե՝ ՀՀ Տավուշի մարզ, գ. Կողբ Հեռ.՝ 0266-5-21-90 Էլ. փոստ՝ koghb.tavush@mta.gov.am  
Հասցե՝ ՀՀ, Տավուշի մարզ, գ. Կողբ, 52 փ., շ. 1Հեռ.՝ +374 266 52190:

*Հասցե՝ ք. Իջևան, Սահմանադրության հրապարակ*